Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-02-2020 թ. որոշմամբ
««ԱՌԱԿ-29» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՌԱԿ-29» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻ 9-64 չկա
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04632
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-05-04
1.5 ՀՎՀՀ-ն		02552232
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91212481
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.arak29.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@arak29.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Կարեն Վարազյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Հայկ Հակոբյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Վարազյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Դրամական միջոց	43223981
	Դրամական միջոց	12891853
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
www.arak29.org կայքի ձեւավորում եւ տեղադրում, թարմացումներ, հեռախոսի եւ պլանշետի հարմարացում (շարունակվում է 2020թ.)	7733370	
Ծերենցի պատմավեպերը - անգլերեն թարմանությունները, ուսուցման ուղեցուց, բանասիրական ծանոթագրություններ, անվճար ի-բուք տարբերակ	6131196	
Թումանյանի հարյուրամյակին նվիրված թարմանություններ	4103717	
Հայոց ցեղասպանություն ճանաչման եւ հատուցման նվիրված նյութերի թարմացում	3675129	
Հայագիտական/բանասիրական հոդվածների անգլերեն թարմանություններ	4026230	
Իրավունքի եւ տնտեսական զարգացման հետ կապված նոր նյութեր եւ օգտակար թարգմանությունների պատրաստում կայքի համար	5105537	
Հայոց պատմության ժամանակագրական էջի նյութերի պատրաստում, անգլերեն եւ հայերեն լեզուներով	3026230	
Հայ Առաքելական եկեղեցու օգնություն	2450000	
Կրթության հետ կապված օժանդակություններ	802000	
Անապահով ընտանիքներին օգնություն	650000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	54033642	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	37703409	

Նշումներ՝

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
Աուդիտորական գործունեության արտոնագիր NO 004

"HAYAUDIT"
REPUBLIC OF ARMENIA
LLC

Հասցե Երևան, Սրբ. Գր. Լուսավորչի 15/1
Հեռ. (374-10) 58-07-45
Ֆաքս (374-10) 52-69-41
Էլ. փոստ hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

Address 15/1 Gr. Lusavorchi str,.Yerevan
Phone (374-10) 58-07-45
Fax (374-10) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

N Հ-03/20

«13» 03 2020թ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԱԿ-29» բարեգործական հիմնադրամի

հոգեբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՌԱԿ-29» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում (կամ տալիս են ճշմարիտ և իրական պատկերը) Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի

Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու

նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում.

• ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

• գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը.

• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններին կից բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրեն Հայկ Վարդապետյան

Աուդիտոր Ղուկաս Մուշեղյան

Աուդիտորի վկայական № 592

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազար դրամ	Ծան	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	-
Ոչընթացիկֆինանսականակտիվներ	4	237	237
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*237*	*237*
Ընթացիկակտիվներ			
Դեբիտորականպարտքերբյուջեիզծով		-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	17,659	45,497
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	6	103,900	58,050
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*121,559*	*103,547*
Ընդամենը ակտիվներ		121,796	103,784
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		-	-
Ոչընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		237	237
Ընդմենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*237*	*237*
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ պարտավորություններ բյուջեի զծով	7	2,383	1,748
Եկամուտներին վերաբերող շնորհներ		119,176	101,799
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*121,559*	*103,547*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		121,796	103,784

Տնօրեն
Կարեն Վարագյան
17.02.2020թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

		31.12.2019	31.12.2018
Այլ եկամուտ / կամավոր նվիրատվություն/		40,326	49,598
Այլեկամուտ /ստացվածշահաբաժին/		9,500	-
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ		678	1,697
Տոկոսայինեկամուտներ		3529	0
Ընդամենը այլ եկամուտ	8	**54,033**	**51,295**
Վարչական ծախսեր			
Աշխատակիցների աշխատավարձ		(20,854)	(19,797)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(40)	(28)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր		(69)	(43)
Աուդիտորական և խորհրդատվականծախսեր		(600)	-
Վարչական այլ ծախսեր		(57)	(84)
Ընդամենը վարչական ծախսեր		**(21,620)**	**(19,952)**
Գործառնական այլ ծախսեր		(231)	(194)
Փոխարժեքային տարբերություններից ծախս		(1,506)	(755)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս		(3,902)	(5,070)
Աշխատակիցներին հատուցումների գծով ծախս		(26,068)	(25,324)
Շահութահարկիգծովծախս		(706)	0
Ընդամենըծախսեր	9	**(54,033)**	**(51,295)**
Տարվա արդյունք		**0**	**0**

Տնօրեն
Կարեն Վարազյան
17.02.2020թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Գործառնական գործունեությունից հոսքեր	2019թ	2018թ
Դրամական միջոցների մուտքեր նվիրատվությունից	56,116	143,993
Նյութեր, ապրանքների ձեռքբերումից	0	(40)
Աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից	(943)	(309)
Վճարումներ աշխատակիցներին	(33,626)	(32,738)
Վճարումներ բյուջե	(13,820)	(11,177)
Այլ մուտքեր	2	0
Այլ ելքեր/տրամադրված օգնություն/	(3,902)	(5,070)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**3,827**	**94,659**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Տրամադրված ավանդից տոկոսներ	2350	
Ստացված շահաբաժիններ	9500	
Տրամադրված փոխառության գումարի վերադարձից մուտք		
Տրամադրված փոխառություն	(43,268)	(57,849)
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(31,418)**	**(57849)**
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված Վարկերի և փոխառությունների մարումից	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	-	-
Ընդամենը զուտ հոսքեր	**(27,591)**	**36,810**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(247)	741
Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	**45,497**	**7,946**
Դրամական միջոցներիմ նացորդը տարեվերջին	**17,659**	**45,497**

Տնօրեն
Կարեն Վարազյան
17.02.2020թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7-16 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2020 23:02